ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<05>> դեկտեմբերի 2019թ. N ՀՊ/451-2019

ք. Արմավիր

<<ՆՈՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, հիմք ընդունելով <<Fürst-Otto-Victor-Stiftung-Droyßig>> հիմնադրամի տնօրեն և ծրագրի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 26-ի հրավերը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի առաջին տեղակալի 2019 թվականի դեկտեմբերի 2-ի N02/07.1/28138-19 գրությունը <<Նորավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2019 թվականի դեկտեմբերի 4-ի N41 գրությունը, <<Բազմակարծիք կրթական համակարգի զարգացում>> ծրագրի շրջանակում անցկացվող փորձի փոխանակմանը մասնակցելու նպատակով.

որոշում եմ՝

1. <<Նորավամի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հովհաննես Ստեփանյանին, վարձատրության պահպանմամբ, 2019 թվականի դեկտեմբերի 9-ից 14-ը ներառյալ գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:
2. Հովհաննես Ստեփանյանի գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում <<Նորավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Նորավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Լիաննա Համբարձումյանին:
3. Հովհաննես Ստեփանյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի դեկտեմբերի 16-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Invalid signature

VERIFIED OCSP 12/5/2019 17:59:44 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230